While the Administration's budget request provided \$3 million in Foreign Military Financing (FMF) for Armenia and Azerbaijan, and \$450,000 more to Azerbaijan in International Military Education Training (IMET), the Subcommittee's draft legislation did not specifically delineate funding levels, but did call for military parity for Armenia and Azerbaijan.

With passage by the Subcommittee, the Bill is scheduled to be considered by the full House Appropriations Committee on August 3.

## Hrant Dink Assassin Sentenced

**Continued from page 1**

tions of Armenians in the Ottoman Empire as genocide. Six months before his death, he was given a suspended six-month sentence for "insulting Turkishness" in an article on what remains a highly sensitive subject in Turkey.

Dink's murder sent shockwaves through Turkey and Armenia and caused strong international condemnation. In an unprecedented outpouring of sympathy, tens of thousands of Turks took part in his funeral. Samast will continue to stand trial, along with 18 other suspects, on separate charges belonging to a terrorist organization. He is facing an additional sentence of a maximum 16 years in prison.

Fethiye Cetin, a lawyer for Dink's family, expressed satisfaction with the first verdict in the closely watched case. "The court imposed a sentence that is close to the heaviest possible punishment," Cetin told reporters. "The sentence is very important in terms

of preventing the repetition of such acts that threaten our co-habitation," she said, according to AFP. Etyen Mahcupyan, a Turkish-Armenian columnist who took over editorship of "Agos" after Dink's death, also praised the court for opting for a severe jail term. "The court was courageous enough to go with the evidence, and not go down an ideological path in terms of nationalism," Mahcupyan, who is now a columnist for pro-government "Zaman" newspaper, told Reuters.

The Dink family's legal team has been very critical of the criminal investigation into the killing conducted by Turkish law-enforcement authorities. It has accused police of withholding and destroying evidence to cover up the murder, including footage from a bank security camera in the street where the journalist was gunned down. Turkish prosecutors say police received intelligence as early as 2006 of a plot to kill Dink being organized in the Black Sea port of Trabzon, home to Samast and several other defendants. A Turkish court

## Two Nights of Armenian Specials Planned on ValleyPBS



FRESNO -- ValleyPBS presents two special nights of Armenian-focused programming featuring back-to-back documentaries by filmmaker Hagop Goudsouzian on Tuesday, August 9; on Friday, August 12 feature film Screamers by director Carla Garapedian will air featuring the band "System Of A Down," all to highlight the rich culture, music and history of the local Armenian community during this special time of year—the holy celebration of the Assumption of St. Mary and the Blessing of the Grapes.

ValleyPBS is broadcast on 18.1 over the air, Cable channel 8, Comcast HD 708, and Dish, U-verse and Direct TV channel 18.

On August 9, local news anchor and television personality Stefani Booroojian, along with Prof. Barlow Der Mugrdechian, Director of the Armenian Studies Program at Fresno State, will host the evening. Armenian Exile begins at 7:00 p.m., followed by Armenian Minstrels at 8:30 p.m.

In Armenian Exile (2009), his second film, Goudsouzian paints a self-portrait in which he pursues a greater understanding of his Armenian roots. In 1988, Nagorno-Karabakh's war for independence was in the headlines worldwide. Halfway across the world in Canada, Goudsouzian's peaceful world was suddenly shaken: "I had forgotten I was Armenian, until I saw the courage of these people who had never forgotten who they were and knew what they had to do." Seeking clarity of both history and self, Goudsouzian reflects on Armenian

convicted and sentenced two security officers to six months in prison on corresponding charges in June. Four other officials were each given four-month sentences also for neglecting their duties.

identity, which is at the heart of all his films.

Armenian Minstrels—the newest film in Goudsouzian's trilogy of documentaries showcasing the vibrant culture and rich history of Armenia—traces the long tradition of folk music through performances and interviews with musicians and fans. Filmed in Armenia, Armenian Minstrels features Professor Tovmas Poghosyan, the "Sayat-Nova Minstrel Song Ensemble" and impromptu interviews with well known Armenian minstrels Andranik Ujanci, Astghanush, Kochar, and Makhmour, who sing and recount the critical role their songs and music play in keeping alive a once dying art form, and the role music and songs play as a tool for cultural survival.

Born in Egypt, Hagop Goudsouzian is of Armenian descent and currently lives in Toronto. In partnership with TVOntario TFO, he has produced and directed a number of television and documentary series.

The movie Screamers will air on August 12, at 8:30pm and features multi-platinum, Grammy Award-winning band "System Of A Down" as they lend their music to this critically acclaimed political movie—an impassioned synthesis of concert and hard-hitting expose about genocide in the last century—from Armenian Genocide through the many other genocides in the world up to and including Darfur. Filmmaker Carla Garapedian will be in studio with Leslie Davis and Prof. Sergio La Porta of the Armenian Studies Program as the hosts for the evening.

The European Court of Human Rights ruled last year that the Turkish authorities failed to take adequate measures to protect Dink. It ordered them to pay 100,000 euros (\$142,000) to the slain editor's family in compensation.

**massispost.com**  
**daily news updates**



**SEROP'S CAFE**  
**GREEK & LEBANESE FOOD**  
**SERVING BATON ROUGE SINCE 1979**

## ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

### ԱՆԻ. ԱՒԵՐԱԿՆԵՐԻ ԹԱԳՈՒՅԻՇ ՈՒԺՎԱՄՊԱՌ, ԽՈՆԱՐՅՈՒՅԾ, ԲԱՅՑ ՀՊԱՐ

ՅԱՍՄԻԿ ՅԱՐՈՒԹԻՒՆՆԵԱՆ,  
ԱՅԻ-ԵՐԵՎԱՆ

Կարսից դէպի Անի համելու  
համար անհրաժեշտ է անցնել 45  
քիլոմետր ճանապարհ։ Զափազանց  
դժուար ու ծանր է այդ կիլոմետր-  
բերը յաղթահարելը։

Վախ, անհանգստութիւն,  
հպարտութիւն ու հետաքրքրու-  
թիւն. այս զգացողութիւններն են  
համակռմ հայ ուխտառորին Անիի  
ճանապարհներ։

Ճանապարհն անցնում է ամա-  
ցի դաշտի միջով։ Շուրջը լոռու-  
թիւն է։

Մինչ Անի քաղաք մտնելը  
բերդապարսպի վրայ զբոսաշրջի-  
կին է դիմաւորում Քաղաքուն-  
նաց տուժի զինանշանը՝ սլացող  
առիւծը։ Խորհրդանշիցը զգաստաց-  
նում է. բերդի պարիսպներից ներս  
մտնող պէտք է իմանայ, թէ ովքեր  
են քաղաքի տիրակաները։ Քաղա-  
քի բերդապարիսպը կառուցել է  
Մբաստ երկրորդ Տիեզերակալը։  
Շինարարութիւնը տեւել է 8 տա-  
րի։

Առաջին անգամ Անի այցելո-  
ղին թւում է, թէ բերդի պարիսպ-  
ները կը բացուեն, ու կը տեսնես  
այն հրաշքը, որ դարեր շարունակ  
զարմացրել է արեւելքի եւ արեւ-  
մուտքի ժողովուրդներին։

Երբեմնի հօր եւ գեղեցիկ  
Անին այսօր վերածուել է աւերակ-  
ների։ Ամենազօր ժամանակը եւ  
մարդու աւերիչ ձեռքն անինայ  
ոչնչացրել են ան-  
զուգական հնու-  
թիւններն ու յու-  
շարձանները։ Անին  
այսօր նման է որ-  
բացած ու տառա-  
պած մօր, որ հպար-  
տութեածք փորձում  
է դիմանալ բոլոր  
չարիքներին ու շա-  
րունակել գոյատե-  
ւել, թէպէտ անինայ  
հարուածներից  
առաջացած վէրքե-  
րը դեռեւս չեն սպի-  
ացել։

Միջնադարեան  
չայաստանի մշա-  
կութային խոշոր  
կենտրոն Անիում  
հաւասարապէս զար-  
գացած էին արհեստ-  
ները, մատենագրու-  
թիւնը, գիտութիւնը,  
ճարտարապետու-  
թիւնն ու արուեստի  
միւս ճիւղերը։

Անին ունեցել է  
40 քաղաքային դար-  
պաս, եղել առեւտրային, մշակու-  
թացին կենտրոն։

Անին համարւում էր հազար  
ու մէկ եկեղեցիների մայրաքաղաք։  
Սա մի թիւ էր, որ նշւում է  
արեւելքում առաւել մեծ հոչակ  
ձեռք բերելու համար։ Թէպէտ  
Անին եկեղեցիների մայրաքաղաք  
էր, սակայն արդէն մի քանի դար  
այստեղ պատարագ չի մատուցուել,  
եկեղեցիներում խունկ չի ծխուել  
եւ աղօթք չի կարդացուել։

Չնայած դարաւոր աւերում-  
ներին, վեհաշուք մայրաքաղաքը  
պահպանել է ճարտարապետական  
կոթողների աւերակներն ու մնա-  
ցորդները։ Կիսաւել կառուցները,  
փլատակները, կառուցների առան-  
ձին հատուածներն ու քանդակներն  
են յուշում աւերակների թագուհու  
երեմնի գեղեցկութեան ու փառքի



մասին։

Բերդապարսպից ներս, գե-  
րեզմանային լոռութեան մէջ, զրօ-  
սաշրջիկին դիմաւորում են հազա-  
րամեաց մշակոյթ ունեցող եկեղե-  
ցիներն ու յուշարձանները։

Առաջին տաճարը, որ գրա-  
ւում է այցելու ուշադրութիւնը,  
Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին է։  
Այսօր պահպանուել է եկեղեցու  
ընդամէնը մէկ երկրորդ հատուա-  
ծը, սակայն այդ հատուածն էլ թոյլ  
է տալիս պատկերացում կազմել, թէ  
քարի հայ վարպետները ճարտա-  
րապետական ինչպիսի միտք են  
ունեցել, ու դարեր առաջ ինչպիսի  
հրաշք է այստեղ վեր խոյացել։



Միայն ապշել կարելի է, թէ ինչպէս  
է այդ տեսքով եւ կառուցով եկեղե-  
ցին պահպանուել մի քանի հարիւ-  
րամեաց։

Եկեղեցու ներսը զարդարուած  
է որմանակարներով։ Սուրբ Ամե-  
նափրկչի տեսքն այսօր անպիսին  
է, որ բաց երկինքն է լուսաւորում  
ասսուածաշնչեան պատկերները, եւ  
յատկապէս մայրամուտին, երբ արե-  
ւի ճառագալթները լուսաւորում  
են եկեղեցին, տպաւորութիւն է  
ստեղծում, թէ պատկերները եր-  
կինք են բարձրանում։

Անիի եկեղեցիների թագու-  
հին Մայր տաճարն է՝ Սուրբ Կա-  
թողիկէն ճարտարապետներն ու  
պատմաբաններն այն համարում են  
կովկասի ճարտարապետութեան  
զարդը։ Եկեղեցին նուիրուած է  
Աստուածածնին։ Շինարարութիւնը

Սա իհարկէ առասպել է, սա-  
կայն ո՞վ իմանայ, զուցէ հենց  
կատրանիդէ թագուհու հրեշտակն  
է պահպանում եկեղեցին չարիքից,  
երկրաշարժերից ու թուրքերի առե-  
լութիւնից։

Մայր տաճարից դէպի հարաւ-  
առի բերանին, վեր է խոյանում մի  
եկեղեցի, որ գարդարուած է որմ-  
նանկարներով։

1215-ին մեծահարուստ Տիգ-  
րան Հոնենցի նուիրատուութեամբ  
կառուցուած Սուրբ Գրիգոր Լու-  
սաւորիչ եկեղեցին բարակ սիւներ  
եւ նուրբ կամարներ ունի։ Դրսից  
տաճարը նման է առնական տղա-  
մարդու։ Այն ուժեղ է, գեղեցիկ,  
խրոխտ եւ ներդաշնակ բնութեա-  
նը։ Ներսից փիրուն եւ քմահան  
կին, որ խոյուած է բազմաթիւ  
վէրքերով։

Սուրբ Գրիգոր Լուսաւորիչը  
զարդարուած է որմնանկարներով,  
աստուածաշնչեան պատկերներով  
ու խաչերով։

Մայնետական ատելութիւնն  
ու թշնամանքը հասել են այն  
աստիճանի, որ թուրքերը փորել են  
տաճարում պատկերուած սրբի աշ-  
քերը։ Պատերին թրքերէն գրու-  
թիւններ են, միույ խոստովանու-  
թիւններ, խզբոցներ։

Տաճարի խորանը չի պահ-  
պանուել, եկեղեցու գլխին խաչ  
չկայ։ Դրսից տաճարը զարդարուած  
են հայկական արձանագրութիւն-  
ները։ Դրանց մի մասը ջարդուած  
է, միւս հատուածը պահպանուել է  
հրաշքով։

Քաղաքի մէկ այլ հատուա-  
ծում շրջանաձեւ կառուց կայ։ Տա-  
ճարն այդ կոչում է Գաղկաշէն։  
Ճարտարապետական կառուցուած-  
քով նման է Զուարթնոց տաճարին,  
սակայն աւելի մեծ է։

Ճարտարապետը՝ Տրդատը, շի-  
նարարութեան ընթացքում բազ-  
մաթիւ փոփոխութիւններ է մտցրել,  
որպէսպի Գաղկաշէնն առանձնանայ  
Զուարթնոցից։ Եկեղեցին եռայարկ

Տար. էջ 18

**Հ.Ս.Ս. ի Տիկնանց Յանձնախումբը  
կազմակերպած է պայուտ մը դէպի**

**SANTA BARBARA**

Cachuma Lake, Solvang and Casino

Շաբաթ, Օգոստոս 6, 2011ին  
Մեկնում առաւօտեան ժամը 7:30ին  
Փասատինայի ակումբին  
1060 N Allen Ave., Pasadena, CA 91104

**Ներառեալ ճաշ խորոված**

**Սակ \$45 անձի**

**Հեռածայնել**  
(626) 497-5111 (626) 429-8366

## ՍԵՎՈՒՅՑՆ ԱՌԱՅՑ ՌԵՏՍՈՒՇԻ (ԳԱՐԵԳԻՆ ՍԵՎՈՒՅՑԻ 100-ԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ)

## ԱԻԻԿ ԻՍԱՀԱԿԵԱՆ

Գարեգին Սեւունցը գեղեցիկ  
տղամարդ էր: Ծնուռնդով ինձարես-  
կից, ներքինով՝ զանգեզուրցի, ար-  
տաքինով՝ երրոպացի: Նա զբական  
աշխարհում յայտնի դարձաւ իր  
«Թէհրան» երկհատորեալ վէպով:  
Գրել էր երիտասարդ հասակում,  
արկածային սիւժէ ունեցող, մէկ  
չնչով կարդացուող վէպ էր, որին  
շատ յարմար էր ոռւսական բեկետ-  
րիստիկա բառը՝ «որպէս թէ՛ ժանր,  
թէ՛ ձեւ, իսկ տպագրուելուց յետոյ  
նրան շատ յարմար եղաւ անգլերէն  
բառը (որն, ի դէպ, ծնունդ է առել  
ԱՄՆ-ում)՝ բեստսելլեր:

Ուրեմն Սեւունցը խորհրդա-  
լին առաջին բետասելլերներից մէ-  
կի հեղինակն է, որովհետեւ վէպն  
առաջին անգամ լոյս տեսաւ ոռու-  
սերէն: Երիտասարդ արձակագիր,  
որն, ի դէպ, Հայրենական պատե-  
րազմի ծամնակից էր եւ թեհրանի  
մասին վէպը գրել էր ոչ թէ ուրիշ-  
ների պատմածների, այլ իր անձ-  
նական տեսածի եւ վերապրածի  
մէջ:

Բացառուած չէ, որ Սեւունցը  
Զանգեզուրից ոչ այնքան հեռու  
գտնուող թեհրանում որոշակի հե-  
տախուզական միսիա է կատարել:  
Այն, որ երիտասարդ սպան պատե-  
րազմեան Պարսկաստանում սովո-  
րական պահակակետային կամ  
տրանսպորտային ծառայութիւն չի  
տարել, յայտնի էր բոլորին: Սե-  
ւունցը բնածին շատ ինելացի էր,  
որպէսզի նրան չվստահէին եւ աւե-  
լի կարեւոր առաջադրանքներ չտա-  
յին: Բայց եւ Սեւունցը այնքան  
խելօք էր, որ պատերազմից յետոց,  
հրաժեշտ տալով զինուորական հե-  
տախուզութեան աշխարհին, իր  
իմացածը տաղանդաւոր կերպով  
թղթին փոխանցեց՝ կերտելով  
«Թեհրան» վէպը եւ ներխուժելով  
գրական աշխարհ:

Աշխատանքը խորհրդագին բանակի հետախուզութիւնում նրան հնարաւորութիւն տուեց, որ Երեւանում էլ ոչ քիչ մի պատասխանատու՝ Արտասահմանեան երկրների հետ բարեկամութեան եւ կուլտուրական կապի հայկական ընկերութիւնում՝ որպէս նախագահ աշխատի, որը, թերեւս, մինի արտաքին գործերի եւ մշակութի նախարարութիւն էր, որի նախագահը, ընականաբար, գուտ բարեկամական նկատառումներով, ամէն օր պէտք է շփուեր ու աշխատեր օտար երկրներից եկած տարբեր բնոյթի մարդկանց հետ: Սակայն Սեւունցը մեզ համար, առաջին երթին, գորդ եւ հայրենանուէր գործիչ էր:

Նրա անունն առաջին անգամ  
լսել եմ 1949 թ. աշնանը, մեր տանը:  
Սեպտեմբերին տատիկս, պապիկս  
առաջին եւ վերջին անգամ հանգս-  
տացել էին Սոչիի կառավարական  
առողջապահության մեջ:

Հայաստանից էլ այնտեղ նոյն  
ժամանակ հանգստանալիս է եղել  
մեր ԱօԿՄ-ի նախագահ Սեւունցը՝  
իր շատ համակրելի եւ երիտա-  
սարդ կնոջ՝ բանաստեղծուհի Շո-  
ղիկ Սաֆեանի հետ (ի դէպ, ծնուն-  
դով նոյնպէս Խնձերեսկից): Երի-  
տասարդ գրողական զոյզը վայելել  
է իսահակեանի ջերմ, ընկերական  
վերաբերմունքը: Այդ մասին եւ,  
ընդհանրապէս, Սոչիի իսահակեա-  
նական Սեպտեմբերի մասին հե-  
տաքրքիր ցուշեր է գրել Խորհրդա-  
յին Հայաստանի գլաւիիտի ծառա-

յութեան նախկին պետ Գրիգոր  
Մարտիրոսեանը (ի դէպ, այդ գիր-  
քը կրկնակի տպագրութիւն է ու-  
նեցել): Եւ ահա հանգստեան վեր-  
ջին օրերին բռնում է տատիկիս  
ուժատիզմը (յօդացաւ), եւ տատի-  
կիս Սոչիի կայարանում ձեռքերի  
վրայ, աւտոմեքենայից երեւանեան  
գնացքի վագոն է հացնում Գարե-  
գին Սեւունցը: Վերջինիս ասպե-  
տական արարքը եւ նաեւ այն, որ  
տատիկիս մայրը ծագումով նոյն-  
պէս զանգեղուցի էր՝ Շինուհայ-  
րից, Օրբելեանների տոհմից, Սե-  
ւունցին շատ սիրելի եւ հարազատ  
է դարձնում տատիկիս համար:  
«Սեւունցը՝ ինձ ոնց իր մօրը  
վերաբերուեց, անչափ հոգատար  
է»:

ՏՐԵՒՅՈՒՆ ԵՎ ՎԱՐԱՐԿԵՄՈՒՅՆ  
ՃՈՎԻԿԻ ՑԻ ՀԱՐՔ ԳՐՈՂՆԿԵՐԻ ԴԱՍԱՌԱՅ  
ԷՐ ԻՐ «ՈՐԴԻՒՆԵՐԻ» ՀԱՐՔԻՆ, ԱՅԼ-  
ՎԻԽԻԿԻ ԷՒՆ՝ ՀՐԱՀԵԱ ՔՈՉԱՐԸ, ՅՈՎ-  
ՀԱՆՆԽ ՇԻՐԱՎՈՐ, ԳԱՐԵԿԻ ՍԵՆՈՒ-  
ՅԸ, ԱՉՊԱ ԳՐԱԺԻՆ, ՅԱԿՈԲ ՍԱԼԻՄ-  
ԵԱՆԸ: Այնպէս որ «ի՞մ որդի»,  
տատիկից եմ յիշում ՍԵՆՈՒՆց անու-  
նը:

Եւ յետոյ էլ լիշում եմ նրանց  
տունը՝ սեփական, մէկ յարկանի,  
բակին նայող մեծ փայտեայ պատշ-  
զամքներով, եթէ չեմ սխաւում,  
Գետափի ափին՝ Կրիփոյ թաղամա-  
սում: Հենց այդտեղ մեծ քեֆ էր  
կազմակերպուած, չեմ լիշում՝ Սե-  
ւունցի՝ թէ՞ Շողիկ Սաֆեանի 40-  
ամեակն էր: Այն տարիներին բոլոր  
համեստ ու ոչ համեստ մարդիկ  
իրենց ծննդեանը տօները, հարսա-  
նիքները անց էին կացնում իրենց  
տներում:

Սեղանը գցած էր պատշգամ-  
բում, շատ բազմամարդ էր, քեֆին  
հարիւր մարդ էր մասնակցում,  
փայլում էին իրենց սրախօսու-  
թեամբ Վարպետը, Քոչարը, իրենց  
երգերով՝ Հրաշեաց Յովհաննիսեա-  
նը եւ Սիլվա Կապուտիկեանը, իրենց  
գեղեցկութեամբ՝ մայրս՝ Բելլա  
Խսահակեանը, Շողիկ Սաֆեանը,  
իրենց ասմունքով՝ Թամար Դե-  
մուրեանը, Ալեքսանդր Աղամեանը-  
Քեֆը թեժացաւ, երբ Վարպետը,  
թաշկինակը ձեռքին, Գիւլըրուաց  
նշանաւոր «կարսի պոնկին» պա-  
րեց:

Այդ օրն անմոռանալի էր.  
Սեւունցը չնայած երիտասարդ, սա-  
կայն մազերը բաւականին ճերմա-  
կած էին, ինչը նրան տարիքով  
աւելի մեծ էր ցոյց տալիս: Շատ  
երջանիկ էր, որ քեփն այդպէս լաւ  
ստացուեց: Նա եւ Շողիկը ամբող-  
ջովին կլանուած էին Վարպետով եւ  
չին թողնուած, որ նա մէկ վայրկ-  
եան իրեն մենակ գտայ:

Արդէն կէս գիշերին, ամենայն  
պատիւներով, մեզ ուղեկցեցին մին-  
չեւ Վարպետի կապոյտ «Պոբե-  
դան», որի վարորդը՝ Վարդգէսը,  
այդ քեֆին նոյնպէս մասնակից՝ մի  
քանի բաժակ զցել էր:: «Հը,  
Վարդգէս, - դիմեց վարորդին Սե-  
ւունցը, - թէ քեֆդ լաւ է, ես  
Վարպետին տուն կը հասցնեմ»:  
Ասեմ, որ Սեւունցը դեռ թէհրանից  
գիտէր մեքենայ վարել եւ մեր  
գրողներից առաջիններից «Գոլ-  
ռա» աւտոմօքներնախոնեթ որո՛ նոյն

գմ» աշխատավանդաց գույք, որը սրբազնացրութիւնն էր: «Ոչինչ, ոչինչ դու զնա քեփդ շարունակիր, հիւրերին մենակ մի թող, Վարդգէսը զոց զիտէ մեր տան ճամբան», — այսպէս, Վարպետի այս խօսքերով հրաժեշտ տուինք:

կը մեր զրողներից, ուղեւորուեցարտասահմանեան երկրներ, զարմանալի բաժանում գոյութիւն ունէր խորհրդացին համակարգում մարդկանց մի մասը զրողներ լինէին թէ բժիշկներ, ինժեներ թէ դասախոսներ, (երկրից դուրս գալու ենթակայ), մեր զրողներից ացող մասի մէջ էին մանում (բերում են յիշողութեամբ եւ ոչ լրիւ) Հրաշեայ Քոչարը, էդուարդ Թոփչեանը Նալիքի Զարեանը, Ռուբէն Զարեանը, Հրաշեայ Յովհաննիսեանը Վահագն Դաւթեանը, Սիլվա Կապուտիկեանը, Գէորգ էմինը, Գուրգէն Բորեանը, Գիգի Տէր Գրիգորեանը, Աշոտ Արզումանեանը, Մարտ Մարգարեանը, Լեւոն Զախիերդեանը, Վարդգէս Պետրոսեանը եւ իշարկէ Գարեգին Սեւունցը:

իսկ ահա երկրից դուռն զալու  
ոչ ենթակայ շարքի մէջ էին Աւե-  
տիք իսահակեանը, Դերենիկ Դե-  
միքանեանը, Յովհաննէս Շիրազը  
Լեռ Կամսարը, Խաչիկ Դաշտենցը  
Համօ Սահեանը, Գուրգէն Մահա-  
րին, Մկրտիչ Արմէնը, Սողոմոն  
Տարօնցին, Պարոյր Սեւակը, Պիոն  
Յակոբեանը, Սերգէյ Սարինեանը  
Կարելի է շարքը շարունակել...

Նա մէկ անգամ էլ մեր տուն  
եկաւ որպէս չիլիացի աշխարհահռ-  
չակ բանաստեղծ Պաբլօ Ներուղայի

ուղեկից: Պահպանուել է լուսանկարը՝ մեր տան պատշգամթքում: Սուրբ են խմում Վարպետը, Ներուդան, իր գեղեցկուհի կինը՝ իզոլան, տատիկս, Սեռունցը եւ ծոսկովեան թարգմանչուհին:

Այդ տարիներին Սեւունցի հետ  
բաւական մտերիմ էր Հայաստանի  
Կենտկոմի առաջին քարտուղար  
Սուրեն Թովմանեանը, նոյնպէս զան-  
գեզուրցի, Շինուհայրից: Այդ տա-  
րիներին, գուցէ նաև հիմա, մեծ  
նշանակութիւն էին տալիս, թէ ով  
որտեղացի է, եւ թովմանեանի  
«գեմրեակներ» Սերո Խանզադեա-  
նի եւ Գարեգին Սեւունցի բախտը  
բերեց: Նրանք առաջինը մեր ժա-  
մանակակիցներից, կենտանի գրող-  
ներից սկսեցին տպագրել իրենց  
երկերի բազմահատորեաց հաւա-  
քածուները, Սեւունցը՝ հինգ հատո-  
րով (1963-1965 թթ.), Սերո Խան-  
զադեանը նոյնպէս հինգ հատորով  
(1967-1970 թթ.):

ՀԱՊՀ անրապես ՄԵԼՈՒՆԳԸ ընթիւցողի պակաս չի զգացել: 1950-ական թուականներին նրա «Թեհրան» վեպը ամենակարողացուող գրքերից մէկն էր Ռուսաստանում եւ Միութեան այլ հանրապետութիւններում:

թէեւ Սեւունցը մարդամօտ  
էր, պարզ ու համեստ անձնաւորու-  
թիւն, սակայն, բնաւորութեամբ  
ինքնիշխան էր, չէր ընկերանում  
այս կամ այն գրողական շրջապա-  
տին, ասենք, նշանաւոր Կոլխոսին,  
կամ թէ այն շրջանակին, որն աւելի  
մօտ էր Գուրգէն Մահարուն, իսկ  
յետոյ՝ կոստան Զարեանին: Նա  
աւելի մենակեաց, ինքնամփոփ մարդ  
էր: Գեղեցիկ տղամարդ լինելով,  
թւում էր, թէ պէտք է բաւական  
սրտեր գերած լինէր, ինչպէս, ասենք,  
Պարոյր Սեւակը կամ Հրաչեաց  
Յովհաննիսեանը: Սակայն նա հա-  
մոզուած մէկ սէր ունէր՝ իր Շողի-

渝ар.п № 17



**ARMENIAN COMMUNITY  
COALITION** of Pasadena

## ՆԱԽԱՑԵՌՆՈՒԹԵԱՄԲ ՓԱՍՏԱՏԻՆԱՅԻ ՀԱՄԱԳԱՂՈՒԹԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ

# Кристи

## ԲՈԼՈՐ ԾԱՐՏԱՐԱՊԵՏՆԵՐՈՒՆ, ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾՆԵՐՈՒՆ

Փաստինայի Վիքթորի Հանրային Պարտէզին մէջ,  
կը ծրագրուի զետեղել Ապրիլեան  
Յեղապահութեան Ցուշարձան մը:

Անոնք որոնք հետաքրքրուած են յուշարձանի  
իրականացումով կրնան Շերկայացնել  
իրենց նախագիծը մինչեւ Ցուլիս 31, 2011  
ժամադրութեան եւ յաելեալ տեղեկութեան  
համար հեռածանել (626) 398-4520:

ԱՏՎԱՐԴԱՐԾ

# ԻՐԱՆԱՐԱՅՈՒԹՅԻՆԸ ԻՍԼԱԿԱԿԱՆ ՅԵՂԱՓՈԽՈՒԹՅԻՆԻՑ ՅԵՏԾՈՅ

## ԱԻԵՏԻՍՆԱԶԱՐԵԱՆ

1979ի վերջերին իրանում տեղի ունեցաւ իսլամական յեղափոխութիւն, որի հետեւանքով վլուգուեց երկրում տիրող շահական ծիապետական կարգը, որն ունէր երեք հազար տարուայ պատմութիւն։ Երկրում հոչակուեցին իսլամական կարգեր, պատութեան եւ դեմոկրատիայի խոստումներով։ Անշուշտ նախնական տարիներում որոշ սահմանափակումներ եղան երկրում բնակութիւն հաստատած եւ դարերի պատմութիւն ունեցող փոքրամասնութիւնների-այդ թւում իրանահայութեան նկատմամբ։ Բայց այդ հարցերը որոնց մեծ մասը առընչում էին իրանի հայկական դպրոցներին, կրթա-մշակութային հաստատութիւնների եւ հայոց լեզուի պարապմունքներին, բարեբախտաբար կարճ ժամանակ յետոյ հարթուեցին եւ ամէն ինչ դարձաւ օրինական։ Իրանի մուսուլման-պարսիկ ժողովուրդը միշտ բարեացակած վերաբերմունք է ունեցել մեր նկատմամբ։ Եւ այդ շարունակում մինչեւ այսօր։ Տողերիս գրողը լինելով իրանահայ, թէեւ այսօր բնակում եմ Մ. Նահանգներում (դա եղել է իմ կաթքին հակառակ), երազում եմ մի օր վերադառնալ իմ նախահայերի երկիրը՝ իրան, եւ վերջապէս թաղուել իմ ծննդավայր գիւղում։ Երկար տարիներ ապրելով իրանում եւ վայելելով տեղացի ժողովրդի համակրանքն ու սէրը, շատ դժուար է մոռանալ անցեալի եւ ներկայի երջանիկ օրերը, որոնց ժամ առ ժամ աւելի

Ենք կարօտում, ապրելով Ամերի-  
կա կոչուած երկրում, ուր սովո-  
րոյթները ամբողջովին տարբեր  
են եւ պայմանները դժուարին:

Իրանում քաղաքների եւ գիւղերի տարածութիւնները Ամերիկացին համեմատութեամբ շատ չնչին լինելով մեզ առիթ էր ընծայում հեշտութեամբ մի ժամուայ ընթացքում փոխադրուել քաղաքից քաղաք եւ կամ 15-20 րոպէ քայլելով զիւղից զիւղ անցնել:

Թերեւս այդ էր պատճառնեցից մէկը որ մեզ մօտ իրանում մարդիկ գրեթէ ամէն օր կարողանում էին հանդիպելու իրար եւ տեղեակ լինելու առօրեայ անցուղարձներից, տիրող կացութիւնից եւ վիճակից: Իմ ալեւոր մարդուս կարծիքն է հայ մարդը պիտի իր ծննդավայրում ապրի, մեռնի եւ թաղուի: Ուրիշ տեղ էթէ հողին յանձնուեց կարծ ժամանակից յետոց կը մոռացուի ու կը կորչի: Իրանի կենդանիներն անգամ (եզ, կով, ոչխար, այծ) աւելի երջանիկ են քան զարգացած մի շարք երկրների անսասունները: Ինչո՞ւ, պիտի հարցնէք անկասկած: Որովհետեւ մեր ծննդավայր իրանում անսպաւնները ծնւում, մնւում, մէծանում եւ կաթ են տալիս բնական պայմաններում առանց արհետական ներարկումների, զանազան եւ բազմազան գեղամիջոցների գործածման: Իրանի ոչխարների բուրդը իր կարեւոր դերն ու արժէքն ունի աշխարհի բոլոր շուկաներում, եւ օժտուած է մետաքսի նբարութեամբ: Որովհետեւ մեզ մօտ իրանում ոչխարը մնւում

Է կանաչազարդ դաշտերի պարարտ բույսերով եւ ջուրէ խմում գուլալ աղբէիւրներից:

Իրանի խաղողից պատրաս-  
տած կարմիր գինին (Նոյնը եւ  
Հայաստանի) աշխարհի լաւագոյն-  
ներից է: Երկար ժամանակ զբաղ-

տեղով գինեգործութեամբ, տեսնում էի որ ֆրանսացիները մինչեւ իսկ, նախընտրում են մեր պատրաստած գինին: Որովհետեւ Եւրոպական շատ խմիչքները գունաւոր նիւթեր են պարունակում: Այսքանը միջանկեալ էր անշուշտ: Իսլամական յեղափոխութիւնից յետոց իրան-իրաք ութնամեայ պատերազմին իրանահայութիւնը 2000-ից աւելի մարտնչող գինուորներ, օդաչուներ, սպաներ ունէր իրանի բանակում, որոնցից 200-ը զոհուեցին եւ 300 հոգի էլ անյայտ կորան: Այդ երեւոյթը կրկին անգամ ապացուցեց որ իրանահայութիւնը հաւատարիմ իր ծննդավայրին պատրաստ է արեան գնով ծառայելու իրանին: Այսօր Թեհրանում, Նոր Ջուղայում, Թաւրիզում փողոցներ կան հայ նահատակ զինուորների անուամբ: Ամէն տարի իրանի բարձրաստիճան հոգեւորականները եւ պաշտօնեաները ծաղկեապակներ են դնում հայ նահատակների յուշարձանին, որն գտնուում է Թեհրանի Նոր Բուրաստան հայկական գերեզմանատանը: Ամբողջ երկրի տարածքում գրեթէ հայ բանտարկեալ չկայ: Դրա հակառակը, Ամերիկայում հազարաւոր բանտարկեալներ ունենք: Իրանի կառավարութեան ներկայացուցիչները ամէն տարի այցելում են հայ նահատակների ընտանիքներին եւ իրենց յարգանքը մատուցում: Վերացել են յեղափոխութեան տարիների դժուարութիւնները: Հայերը եւ իրանի միւս փոքրամանութիւնները ամէն տեսակէտից ազատ են,

Հանգիստ եւ ապահով։ Հայոց լեզ-  
ուի դասաւանդումը հայ դպրոցնե-  
րում օրինականացուած է։ Հայկա-  
կան ակումբներում տեղի են ունե-  
նում ուրախ երեկոներ, համերգեր,  
թատերական բեմադրութիւններ եւ  
այլ ձեռնարկներ։

Յաւով եմ յիշատակում որ  
այստեղ մեր նոր սերունդը ուժաց-  
ման վտանգի առջեւ է կանգնած։  
Այդ վտանգը իրանում բնաւ գոյու-  
թիւն չունի եւ մտահոգիչ երեւոյթ  
չէ։ Աւելի քան 400 տարի ապրել եւ  
արարել ենք իւլամական այդ երկ-  
րում, պահել ենք մեր ինքնուրոյ-  
նութիւնը եւ ազգային դիմագիծը։  
Մի քանի խօսք էլ այսաեղի հե-  
ռուսածածրագրելի մասին։ Վնա-  
սակար ժապաւէններ, աղաւաղուած  
երգ-երաժշտութիւն։ Սրանք մեր  
մանուկներին տանում են դէպի  
կործանում։ Անշուշտ մի քանի  
ծրագրեր էլ կան, որոնք իրապէս  
օգուակար են մեր հասարակութեան  
համար։ «Քաջ Նազար» ամսա-  
թերթի կիրակնօրեայ ծրագրերը  
դաստիարակիչ բնոյթ ունեն։ Պա-  
տասխանատու Ցովհաննէս Բալայ-  
եանը ամէն Կիրակի 2 եւ կէս ժամ  
խօսում է մեզ յուղող հարցերի  
շուրջ, պարզ, հասկանալի եւ հե-  
տաքրքրական ոճով։ Ժողովրդան-  
ուէր քահանայի որդին անկասկած  
այդպիսին պիտի լինէր։ «Քաջ  
Նազար»ը համայն հայութեան եւ  
մասնաւորաբեր իրանահայութեան  
խօսնակն է, պաշտպանը եւ պատ-  
գամաբերը։ Բնաւ չեմ կարող մո-  
ռանալ նրա մխիթարական եւ ափո-  
փիչ խօսքերը իմ վաղամեռիկ որ-  
դու էղիկ Նազարեանի մահուան  
առթիւ, որն անզամներ սփռուեց  
եթերից։ Երախտապարտ եմ իրեն։  
Աւարտելով գրութիւնս վտահ եմ որ  
մեր աւանդապահ իրանահայութիւնը  
կը շարունակի ապրել եւ ստեղծա-  
գործել իրանում եւ վառ պահել մեր  
նախահայութի յիշատակը։

# AMERICAN RELIABLE WINDOWS



[www.americanreliablewindows.com](http://www.americanreliablewindows.com)

**\$89** *Rebate\**  
toward the  
price of new  
Vinyl/  
Windows



*Beautify while increasing the value  
of your home with elegant,*

**18 months no interest\*** Financing O.A.C

## **ENERGY EFFICIENT WINDOW AND DOORS.**



Vinyl, Wood, Fiberglass, Clad or  
Aluminum Replacement, Retro or  
New Construction

## ***Our Windows Qualify For Tax Credits***

**Manufacturers rebates & deep discounts available NOW.**

## Product, Pricing and Financing to meet any Budget.

**888-804-7250**

*Your Satisfaction is Guaranteed.*



Serving Los Angeles, Ventura, Orange, & San Bernardino Counties

Licensed • Certified • Insured CSLB LIC#901591

ՇՈԳ ԵՂԱՆԱԿԻՆ ՍԱՐԴՈՒՄ ՕՐԳԱՆԻԶՈԸ  
ԿԱՐՈՂ Է ԿՈՐՑՆԵԼ ՄԻՆՉԵՒ 4 ԼԻՏՐ ՀԵՂՈՒԿ

Ամառային եղանակը, մարդու օրգանիզմի վրայ իր բարերար գրական ազդեցութեան հետ մէկտեղ, կարող է նաեւ առաջացնել առողջական վիճակի տարրաբնոյթ խանգարումներ, յատկապէս, եթէ օդի ջերմաստիճանը գերազանցում է մարդու նորմալ կենսագործունէութիւնն ապահովող միջին ջերմաստիճանային ցուցանիշը:

Շոգ եղանակին մարդու օր-  
գանիզմի վրայ առաւել մեծ ազդե-  
ցութիւն ունեցող հիմնական բա-  
ցասական գործօններն են օդի  
բարձր ջերմաստիճանը եւ ուլտ-  
րամանուշակագոյն ճառագայթու-  
մը:

Ուլտրամանուշակագոյն ճառագայթման հիմնական աղբեւրն արեւի ճառագայթումն է: Սակայն չափից աւելի քանակով ուլտրամանուշակագոյն ճառագայթումը (ճառագայթման ինդեքսի նորման՝ 7, ամռան ամիսներին հասնում է մինչեւ 12) վտանգաւոր է եւ կարող է առաջացնել ինչպէս սուր, այնպէս էլ հեռաւոր ախտահարումներ, մասնաւորապէս՝ արեւացին այրուածք (մաշկի կարմրութիւն, այտուց, ցաւ, բշտերի գոյացում), արեւահարութիւն, ֆոտոկոնյուրկաթիվիտ (կոպերի ցաւոտութիւն, կարմրութիւն, աչքերում աւագի զգացողութիւն, լուսավախութիւն, արցունքահօսութիւն), ֆոտոալերգիա, մաշկի չարորակ նորագոյացութիւններ՝ մելանոտա: Տեղային ախտահարումները կարող են ուղեկցուել նաեւ ընդհանուր տոքսիկ երեւոյթներով՝ մարմնի ջերմ աստիճանի բարձրացում, վլխացաւ, սարսուռ, սրտխառնոց, փսխում:

Հարկ է յիշեցնել, որ ուլտրա-  
մանուչակագոյն ճառագայթման ին-  
տեսիւութիւնը բարձր է յատկա-  
պէս 12:00-17:00-ն ընկած ժամա-  
նակահատուածում: Ուլտրամանու-  
չակագոյն ճառագայթման նկատ-  
մամբ խիստ զգացուն են երեխա-  
ները, ծերերը, դիմաները եւ խրոնիկ  
հիւանդութիւններով տառապող-  
ները:

Օդի բարձր ջերմաստիճանը  
կարող է առաջացնել լուրջ ան-  
հարմարութիւններ բնակչութեան  
համար, ինչպէս նաեւ առողջական  
խնդիրներ։ Օդի բարձր ջերմաս-  
տիճաննային պայմաններում, իր  
կենսագործունէութեան համար  
անհրաժեշտ հաստատուն ջերմաս-  
տիճան ապահովելու համար օրգա-  
նիզմի մի շարք օրգան-համակար-  
գեր ստիպուած շատ աւելի ինտեն-  
սիւ են աշխատում, յատկապէս՝  
սիրտ-անօթալին եւ շնչառական  
համակարգերը, ինչի արդիւնքում  
առաջանում է գործունէութեան  
խանգարումներ։ Բարձր ջերմաս-  
տիճանի ազդեցութեան տակ ներ-  
քին օրգաններից դէպի մաշկալին  
եւ ենթամաշկալին ծածկոյթներ  
արեան տեղաբախչման հետ կապ-  
ուած, յաճախանում է պուլաը,  
բարձրանում է մարմնի ջերմաս-  
տիճանը, տատանուում զարկ երա-  
կացին ձնշումը, շնչառութիւնը  
կարող է յաճախանալ մօտ 2 ան-  
գամ։

Բարձր ջերմաստիճանը կարող է բացասական ազդեցութիւն թողնել նաեւ կենտրոնական նեարդային համակարգի վրայ՝ իջնում է պայմանական ռեֆլեքսների ուժը, առաջանում են շարժողութեան

խանգարումներ, աշխատունակութեան իշեցում, այն նաեւ կարող է արգելակել սեկրետոր գեղձերի հիւթարտադրութիւնը:

Օրգանիզմի ջերմատութեան հիմնական ուղին քրտնարտադրութիւնն է, որն ապահովում է ջերմատութեան 85 տոկոսը: Սովորաբար օրուայ ընթացքում մարդու օրգանիզմից գոլորշիանում է 2-2.5 լիդր հեղուկ: Շոգ եղանակին արտահոսքը կարող է համել մինչեւ 4 լիդրի: Ակտիւ քրտնարտադրութեան արդիւնքում քրտինքի եւ արտաշնչած օդի հետ օրգանիզմից հեռանում են հանքային աղերը (նարիում, կալիում, կալցիում, մագնեզիում եւ այլն), ջրալոյն վիտամինները: Արդիւնքում մարդկանց մօտ կարող են առաջանալ թուլութիւն, գլխացաւ, ապատիա, քնկոտութիւն, սաստիկ ծարաւ:

Գիտնականների հաշուարկով՝  
1 հեղուկ կորցնելու դէպքում  
մարդուն սկսում է տանջել ծարա-  
ւի զգացումը, 2 լ-ի դէպքում  
նուազում է մտաւոր գործունչութ-  
եան ունակութիւնը, 3 լ-ը պատ-  
ճառ է դառնում գլխապտոյախ, 4-  
ի կորուսն առաջացնում է սրտա-  
յին նոպաներ: Օդի բարձր ջեր-  
մաստիճանի, ուլտրամանուշակա-  
գոյն ճառագայթման բացասական  
ազդեցութիւնը մեղմելու, օրգա-  
նիզմի անցանկալի գերտաքացու-  
մը կանխելու, ինչպէս նաեւ վարա-  
կիչ հիւանդութիւններից, մննդա-  
յին թունաւորումներից խուսա-  
փելու համար խորհուրդ է տրուում  
խուսափել արեւի ուղիղ ճառա-  
գայթմներից, յատկապէս՝ 12:00-  
17:00 ընթացքում, աշխատել քայլ-  
ել ստուերում, հնարաւորինս  
պաշտպանուել ուլտրամանուշա-  
կագոյն ճառագայթումից՝ կրել  
գլխարկ, արեւային ակնոց, հովա-  
նոց, հագնել սպիտակ կամ բաց  
երանգների ազատ, օդաթափանց,  
բամպակեաց կտորից հագուստ,  
օգտագործել սովորականից շատ  
ըմպելիքներ՝ մօտ 3 լիդր օրա-  
կան:

Սրտանօթալին կամ միզասե-  
ռական համակարգի հիւան-  
դութիւններով տառապող անձինք  
հեղուկներ պէտք է ընդունեն միայն  
իրենց բուժող բժշկի հետ խորհր-  
դակցելով։ Նրանք պէտք է ճշգրիտ  
կատարեն բուժող բժշկի ցուցում-  
ները, պարտաճանաչ կերպով լի-  
արժէք ընդունեն բժշկի կողմից  
նշանակուած բոլոր գեղամիջոց-  
ներ, Զի կարելի չարաշահել կոֆեին  
եւ շաքար պարունակող ըմպելիք-  
ները՝ թէ տաք, թէ սառը վիճա-  
կում, արգելում է գտնել չօդա-  
փոխուող կամ վատ օդափոխուող  
տարած քններում, երկար ժամանակ  
մնալ արեւի տակ կայանուած փոխ  
ադրամիջոցներում, երեխաններին  
չաէտր է թոռնեւ փակ ատառ հան-

չպէտք է թողսել փակ պատուհան-  
ներով աւտոմեքենաներում, անհրա-  
ժեշտ է ամենօրեայ աշխատանքնե-  
րը կատարել օրուայ համեմատա-  
բար զով ժամերին, ցերեկային  
ամենաշող ժամերին խուսափել  
բացօթեայ ծանր ֆիզիքական աշ-  
խատանքից, ցանկալի է, որ երե-  
խաները, յղիները, ծերերը, քրո-  
նիկ հիւանդութիւններով տառա-  
պող մարդիկ ցերեկային ամենա-  
շող ժամերին քննեն կամ պառկեն,  
քանի որ պառկած դիրքում հեշ-  
տանում է ջերմատութիւնը եւ  
արեան շրջանառութիւնը:

# ՔԻՉ ՔՆԵԼՆ ԷԼ Է ՎԱԿՈ, ՇԱՏՆ ԷԼ ՔՆԱԲԱՆՆԵՐԸ յորդորում են չափաւոր քնել

## ՄԵՐ մայրիկներից շատերն

որոնք չեն թողնի, որ լոյս թափանցի սենեակ: Քնաբան Աղջու Մաթեւսուսեանի խօսքերով՝ «Խորհուրդ չի արտում լոյսի ներքոյ քնել քանի որ օրգանիզմում արտադրուող հորմոնների ցիկլացնութիւնը խանգարուում է, որը հանգեցնում է քնի որակի վատացմանը»: Հստ բժշկի, դեպքեաիան կարող է բերել անքնութեան եւ հակառակը: Անքնութեան առաջին պատճառներից են ընկճուածութիւնը, մտահոգութիւնները: Մասնագէտի խօսքերով՝ մարդիկ չեն էլ հասկանում, որ դեպքեսիա է սկսուում, մինչեւ դանակը ոսկորին չի հասնում. «Մինչեւ հիւանդութիւնը գագաթնակէտին չի համում, չեն դիմում բժշկի»: Մեր այն հարցին, թէ կարո՞ղ է անքնութիւնն ազգել պոտենցիալի վրայ, Ա. Մաթեւսուսեանը վստահեցրեց, որ անքնութիւնն ազդում է հոգեկանի վրայ, որն էլ իր հերթին կարող է ազգել պոտենցիալի վրայ: Բացի այս, շատերը անհանդիստ քնելով կամ քնի մէջ խոմփացնելով չեն էլ գիտակցում, որ դա լուրջ հիւանդութեան նշան է: Բժշկի ներկայացմանը՝ «Շատ տարածուած է ապնոէ-հիպոկնոէ համախտանիշը: Այս հիւանդութեան ժամանակ քնած մարդու մօտ կամ մասնակի, կամ լրիւ փակում են շնչառական ուղիները, որի ընթացքում թթուածնային քաղցի մէջ է ընկնում օրգանիզմը, ու մարդը չի կարողանում խորը քնել: Սա էլ հանգեցնում է նիւթափոխանակային տարբեր խանգարումների, մարդիկ գիշերը խոմփացնում են եւ այլն: Առաջին հերթին այս հիւանդութիւնը բերում է պոտենցիալի անկման: Ապացուցուած է, որ բուժումից յետոյ սեռական ակտիւացում է սկսուում»:

Իսկ թէ որքան պէտք է քնի  
մարդը, որպէսզի առողջ լինի՝ մեր  
հարցին մասնագէտը պատասխա-  
նեց, որ դա կախուած է օրգանիզմի  
պահանջից եւ տարիքից: Սակայն  
ասիստանց եռևար կած կառն ընէն:

Համբազմաց Երկար կամ կարծ քննլու  
էլ լուրջ վտանգներ է ներկայաց-  
նում: Օրինակ՝ եթէ դուք մշտապէս

Քի ընտրութեա

Հիմնականում ծաղկահյութերից, ծաղկների արժատներից... Դրանց տեսականին բազմազան է եւ սպառողին ընտրութեան լայն հնարաւորութիւն է տալիս: Հետեւաբար օծանելիք գնելիս իւրաքանչիւրը իւրովի է կատարում իր ընտրութիւնը: Ասում են, եթէ հազմւում ես սպորտացին ոճով, ուրեմն նախընտրում ես «թեթեւ» հոտեր, իսկ եթէ քեզ դուր է գալիս դասական ոճը, նշանակում է՝ քեզ աւելի հոգեհարազատ են «ծանր» հոտունեառ օծանելի օճուղու:

ունեցող օծանելիքները։  
Կան նաեւ մրգալին բոյրեր,  
որոնք դուր են գալիս հիմնակա-  
նում դեռահասներին։ Օծանելիքի  
գիտակները խորհուրդ են տալիս  
օծանելիքը շատ չօգտագործել, այ-  
սինքն, ինչպէս շատերն են անում  
չլողանալ օծանելիքով, բաւական է  
միայն 1-2 կաթիլ տարածել մարմ-  
նի պուլսալին շրջաններում։ Նա-  
խադաստակին, ականջի հետեւի  
հատուածում, պարանոցին (սա վե-  
րաբերում է մաքրուր բաղադրութիւն  
ունեցող, որակեալ օծանելիքներին)։  
Ապացուցուած է, որ օծանելի-

կանում համգիստ բնաւորութեամբ  
մարդիկ նախընտրում են քաղցր  
հոտեր, իսկ ազրեսիւ եւ բարդ  
բնաւորութիւն ունեցողները դառը  
հոտեր են սիրում: Բայց չի բա-  
ցառւում, որ մարդը զայրացած  
վիճակում մտնելով խանութ՝ ընտ-  
րի ինչ-որ «ազրեսիւ» բոյր, իսկ  
հանգիստ վիճակում՝ մրգային, ծաղ-  
կային նուրբ բոյրեր: Այստեղից  
պէտք է հետեւութիւն անել եւ  
օճաննեիքի խանութ՝ մտնելիս նեար-  
դաշնացած չլինել:

Նշենք, որ կան օծանելիքներ,  
որոնք ունեն դարերի պատմութիւն,  
որոնցից է, օրինակ, «HERMES»  
օծանելիքը, որը ստեղծուել է մօտ  
200 տարի առաջ:

Այժմ հագուստի պրոֆեսիոնալ ֆիրմաները արտադրում են իրենց հագուստը նախընտրողներին համապատասխան օծանելիք։ Եթէ 12 տարի առաջ «ADIDAS» կամ «BOSS» ֆիրմաները արտադրում էին միայն սպորտային հագուստներ, այժմ շուրջ կազմակերպությունը ներկայանում է նաև համանուն օծանելիքներով։



**ԱՆԻ. ԱԷԵՐԱԿՆԵՐԻ ԹԱԳՈՒՅԻ՝ ՈՒԺՎԱՍՊԱՌ,  
ԽՈՆԱՐՀՈՒԱԾ, ԲԱՅՑ ՀՊԱՐՏ**



**Ծարունակուածէջ 13-էն**

Է եղել, արտաքին կողմից շրջապատուած 36 կամարով, ունեցել է նոյնքան թուով պատուհան եւ 3 դուռ, որոնց շրջանակները ծածկուած են եղել քանդակներով:

Գագկաչէնն ընդամէնը 10 տարուայ կեանք է ունեցել եւ հիմնովին աւերուել երկրաշարժից: Այսօր պահպանուած խոյակները, կամարները, սիւներն ու զարդանախչերը թեթեւ արտացոլանքն են այն հրաշքի, որ ստեղծուել է դարեր առաջ:

Անիի արտաքին պարապից դուրս է գտնուած Հովուի եկեղեցին: Գոյթական ոճով կառուցուած եռայարկ եկեղեցին ճարտարապետական գոհարներից մէկն է: Քաղաքուած պահպանուած բերդապարիսպները յուշուած են Անիի հզօրութեան եւ անսուիկութեան մասին:


Անին հզօր է ոչ միայն իր հսութիւններով եւ պատմական յուշարձաններով, այլեւ բնութեան ներդաշնակութեամբ: Այսոել իւրաքանչիւր պարսպ, կառուց եւ եկեղեցի համահունչ:

Է բնութեանը, Ախուրեանին ու հանդիպակաց լանջերին եւ ստեղծուած է բնութեան ու ճարտարապետութեան համաձուլուածք:

Այսօր Անին բաց տուրիստական գոտի է, տարիներ առաջ փակ

ուազմական տարածք էր: Աւերակների կոյտի վերածուած Անին դարեր շարունակ դարձել է խաշնարած ցեղերի քոչավագրը: Նրանք իրենց գոմերը, փարախներն ու խոճիթները կառուցելու համար անխնաց թալանել են վաղեմի մայրագաղաքի սքանչելի, սրբատաշ ու քանդակագործ քարերը, աւերել տաճարները՝ փնտուելով ոսկի եւ թանկագին իրեր:

Մեր այցելութեան ժամանակ զարդանախչերը թեթեւ արտացոլանքն են այն հրաշքի, որ ստեղծուել է դարեր առաջ:



Էլ Անիի աւերակներուած մի քանի տասնեակ կովեր էին արածուած՝ երեքնի փառահեղ թագուհու անսուութեան համաձուլուածք:

Ֆիւրտ կինը չէր հասկանուած, թէ ինչու են հայ զբոսաշրջիկները

**ՃՆՈՐՃԱՒՈՐՈՒԹԻՒՆ**

Ուրախութեամբ կ'իմանանք թէ Տէր եւ Տիկ. Առնօ եւ Նանոր Թիւթիւննեան բախտաւորուած են աղջիկ զաւակով մը եւ անուանած Արիաննա-Քնար: Մեր ջերմ շնորհաւորութիւններն ու երջանիկ կեանքի բարեմաղթութիւնները նորածինին՝ անոր ծնողքին եւ մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Քնար Թիւթիւննեաններուն:

**ՔԱԶ ՆԱԶԱՐ ՈՒՂԻՂ ԵԹԵՐ ՇՕ**  
Ամեն Կիրակի երեկոյեան  
Ժամը 10:00-ից 12:30  
Կլէնտէյլի 380-րդ կայանից



Մայր տաճարում երգում, աղօթում ու արտասուում: Նրա համար տաճարն ընդամէնը քարի կտոր էր, իսկ տարածքը՝ հրաշալի արօսավայրը իր կովերի համար:

Ոչ ոք չի կարող պատասխանել, թէ որ մեղքի համար է Անին այսպէս պատժուած: Ի՞նչ է նա արել, որ նման դաժան կերպով է հասուցուած:

Վերջին վիրաւորանքն ու ծանր հարուածը, որ ստացաւ Անին, անցեալ տարի էր, երբ թուրք ազգայնականները Մայր տաճարում նամազի արարողութիւն կատարեցին: Քրիստոնեաց եւ բարեպաշտ աշխարհը լուց ու չդատապարտեց մահմետականների այդ արարքը, դրանով իսկ հիմք ստեղծուելով, որ

նման արարքները կրկնուեն: Թէպէտ Անին ուժասպառ է, սակայն հպարտօրէն դիմանուած է: Միգուցէ երկնալին ուժերն են պահպանուած, որ թագուհին շարունակի գոյատեւել, սակայն յոյսը դնել միայն երկնալին ուժերի վրայ՝ միամտութիւն է:

Այս տարի լրանուած է Անիի մայրաքաղաք հոչակման 1050-ամեակը: Արդեօք ժամանակը չէ, որ Հայաստանի Հանրապետութիւնը իրաւական գործընթաց սկսի, որպէսզի համաշխարհային քաղաքակրթական ժառանգութեան կարեւոր յուշարձան Անին ՅՈՒՆԵՍԿՕ-ի օժանդակութեան ցանկուած ընդգրկուի՝ այդ կերպ պաշտպանուելով թրքական բարեպարտութիւններից:

**ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**

1060 North Allen Ave  
Pasadena, CA 91107

Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձերով Հետաքրքրուողներէն հեռածայնել՝  
(626) 398-0506

**ՎԱՐՉՈՒ ՏՈՒ**

PALM SPRINGS ԱՐՁԱԿՈՒՐՈՒ ԳՆԱՑՈՂ  
ՀԱՅՐԵՆԱԿԻՑՆԵՐԻ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Փալմ Սփրինկսի գեղատեսիլ եւ կից լեռնային շրջանին, վարձու է տրուու լրիւ կահաւորուած մէկ ննջարան, մէծ նստասենեակ, խոհանոց՝ բոլոր յարմարութիւններով, մինչեւ 5-6 հոգի գիշերելու տարողութեամբ Condo: Ունի մեծ լողաւազան, ջաքուզի, թենիսի խաղադաշտ, կանաչազարդ վիքնիքի տարածք, իր յատուկ կրակարաններով եւ 24-ժամեայ ապահովութեան սիստեմ:

**ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԻ համար հեռածայնել՝  
(818) 246-0125**

Վարձման գներն են՝

Ուրբաթ, Ծաբաթ եւ Կիրակի՝	\$ 400
Long Weekend-ների համար՝	\$ 500
Սէկ շաբաթուայ համար՝	\$ 675
Սէկ ամսուայ համար՝	\$ 1450

## ՇՈԳԵՇԱՆԳԻԱՏ



Հանգուցեալ Անժէլ Շիրինեանի մահուան քառասունքին առիթով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, Օգոստոս 7, 2011, Փաստինակի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

Խնդրողներն են:  
Դուստրը՝ Ժանէթ Շիրինեան  
Որդին՝ Սարգիս Շիրինեան  
Որդին՝ Հրայր Շիրինեան  
Թոռնիկը՝ Մարալ Գաֆարճեան եւ զաւակունք եւ համայն հարազատները:

### ԱՐՏԱԳԱՂԹԸ ԿԱՆԽԵԼՈՒ ԱՄԵՆԱԿԱՐ ԲԱՆԱՊԱՐՅԸ

#### Շարունակուածէջ 2-էն

Ասեղծի: Անձամբ վարչապետն, ինչպէս յայտնի է, Զերմ յարաբերութիւններ ունի «Նախրիտի» հետ: Եւ ի՞նչ գործարանը տարիներով չի աշխատում, ով էլ աշխատում է՝ ամիսներով փող չի ստանում, իսկ ով բողոքում է՝ ստում են «Համբալ»: Այդպիսի «աշխատատեղե՞րը» պիտի կանին արտագաղթը: Եւ ընդհանրապէս՝ ո՞վ է ասել, որ կառավարութիւնը պիտի աշխատատեղեր բացի: Կառավարութիւնը մարդկանց հանգիստ հանդիսավոր է:

Թողնի, նորմալ պայմաններ ստեղծի ու հետեւի, որ բոլորը հաւասար պայմաններում լինեն: Իսկ նոր աշխատատեղեր ստեղծել իսկապէս պէտք է: Դա, ի դէպ, հարաւոր կը լինի անել այն մի քանի միլիարդ դոլարով, որը վաղ թէ ուշ դատարանի որոշմամբ առգրաւուելու եւ վերադարձուելու է պետութեանը: «Մեր անցկացրած հարցումները» վկայում են, որ սա է արտագաղթը կանխելու ամենաարդիւնաւէտ ճանապարհը: Ի դէպ՝ նաեւ ամենակարճը:

«ԶՈՐՌՈՐԴ  
ԻՆՔՆԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ»

## ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ

ՓԱՍԱՏԻՆԱՅԻ ՄԵԶ (200 Շոգի ՇԱՄԱՐ)

### ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ՇԱՄԱՐ

1060 N. ALLEN AVE. PASADENA

ՄԱՆՐԱՄԱՍՆԻԹԻՆՆԵՐ՝ ՇԵՌԱՋԱՅՆԵԼ  
(626) 797-7680

REQUEST  
FOR PROPOSALS  
(RFP #7544)  
INDEPENDENT AUDIT  
AND TAX RETURNS  
SERVICES

The Housing Authority of the City of Los Angeles invites proposals from qualified firms interested in providing independent audit and tax returns services. Copy of the RFP may be obtained beginning July 11, 2011 via [www.hacla.org/ps](http://www.hacla.org/ps) or call (213) 252-5405 or 252-1832. Proposals will be accepted at 2600 Wilshire Blvd., #3100, Los Angeles CA 90057, until 2:00 P.M., by August 12, 2011.

7/21, 7/28/11  
CNS-2133811#  
MASSIS WEEKLY

## ՈՎ Է ԻՐԱԿԱՆՈՒՄ ՀԱՐՈՒԱԾՈՒՄ ԵԿԵՂԵՑՈՒՆ

#### Շարունակուածէջ 2-էն

մական դերը, համարելով, որ պետութեան չգոյութեան պայմաններում իր վրայ վերցնելով ազգի պահապանի փունկցիան, Հայ Առաքելական եկեղեցին պարզապէս չի դիմացել այդ բեռի տակ եւ վերնախաւերի մտածողութեան եւ նկարագրի իմաստով ենթարկուել է արժէքային գեղարդացիալի, վերածուելով զուտ «գերատեսչական» շահեր հետապնդող օղակի, որ յետագայում չի ցանկացել իր բացառիկ դերը զիջել պետութեանը: Մինչեւ ժամանակի ընթացքում պետութիւնն է դարձել անվտանգ գոյութեան եւ զարգացման առաւել արդիական ու մրցունակ միջոց ու երաշխիք, քան կրօնական կառուցները:

Բաւական դիւրին է ասել, որ եկեղեցու դէմ հնչող քննադատութիւնը քննադատառութիւն է ազգի, պետութեան դէմ, ու այդպիսով համարել ասելիքն ասուած ու թեման փակուած: Խնդիրները, միեւնոյն է, մնում են ու խորանում, ընդերքում էլ աւելի ուժգնացնելով եռքը, ու ամէն մի նոր ժայթքումը դարձնելով էլ աւելի թէժ, որի առիթները հաստատացի լինելու են նաեւ ապագայում, քանի դեռ եկեղեցին չի արել հանրութեան հետ յարաբերութիւնը եւ ի հանրային դերը վերանայելու հետ կապուած խորքային հետեւութիւնները, այլ ընդամենը բաւարարուել է «դաւադրութեան տեսութեամբ» պաշտպանուելով:

Եւ, թերեւս անհրաժեշտ է նաեւ մի էական հանգամանի յստակեցում: Կարծես թէ փորձ է արտում ներկայացնել ինդիրը այնպէս, որ առկայ քննադատական ալիքը, որ պարբերաբար աշխուժանում է, Հայ Առաքելական եկեղեցի երեւոյթի դէմ է: Իրականում դա մոլորութիւն է, կամ էլ պարզապէս որոշ մարդիկ փորձում են գիտակցուած հարցը ներկայացնել այդպէս, փորձելով պաշտպանուել դրա հետեւում:

Հակառակը, քննադատութեան պարբերաբար աշխուժող ալիքը յանուն Հայ Առաքելական եկեղեցու էկապարութիւնը կամ պէտք է յստակ, պարզ, բաց շփման միջոցով լսի հասարակութեան կոնկրետ հարցադրումներն ու փորձի փաստարկուած եւ լիարժէք պատասխան տայ դրանց, կամ պէտք է յայտարարի, որ ինքը կապ չունի եկեղեցու հետ:

Թւում է, թէ դա իրավիճակի ծալրակեղացուած նկարագրութիւն է եւ կամ հարցադրումը չափազանցութիւն է: Գուցէ, բայց եթէ իրավիճակը հասել է այդպիսի աստիճանի, դրա մեղաւորը առաջին հերթին եկեղեցու ղեկավարութիւնն ու նրա «պաշտպաններն» են, որ փորձում է հանրային քննադատութեան տարածութիւնում թշնամիներ, դաւադիրներ, անհաւասներ փնտուել: Թէեւ գուցէ նրանք բոլորն էլ գիտակցում են, որ դա այն տարածութիւնն է, որտեղ գտնուում է եւ ուր պէտք է փնտուել Հայ Առաքելական եկեղեցու ապագան: Պարզապէս նրանցից շատերը զբաղուած են սեփական պաշտպանի որոնումներով, իսկ ոմանք էլ թերեւս զիտեն ինչով են զբաղուած:

«ԼՐԱԳԻՐ»

Զեր Ծանուցումները  
Վստահեցէք  
«Մասիս» Շաբաթաթիրին

## Burbank Airport

### Bid Request General Contractors

Qualified "A", licensed Contractors are invited to submit sealed bids by 2:05 PM, August 25, 2011 to the Burbank-Glendale-Pasadena Airport Authority for Project Number E11-06, Runway 15 RSA Improvements project. The Work in general consists of, but is not limited to, removal and installation and painting of a jet blast deflector fence on a concrete foundation, paving the runway safety area and vehicular service road with asphalt concrete pavement, sub-grade and base compaction, modifying an existing catch-basin, and application of P-620 pavement markings at the Bob Hope Airport. Plans and specifications can be obtained directly from the Bob Hope Airport Web site at [www.bobhopeairport.com](http://www.bobhopeairport.com) under Business Opportunities. All bidders shall register with the Airport Engineering Department either via web site or in person. Bids submitted by firms who have not registered with Airport Engineering will be considered non-responsive. Call Bobbi Greenspan at (818) 565-1305 for more information. A pre-bid conference will be conducted on August 11, 2011, at 10:00 A.M. at the Bob Hope Airport Engineering Office, 2800 Clybourn, Burbank, California, 91505. Located at the corner of Sherman Way and Clybourn.



# ARMENIAN COMMUNITY COALITION *of Pasadena*


PRESENTS



## 4th Annual *Armenian Identity* FESTIVAL

**SUNDAY JULY 31, 2011**

12:00PM-8:00PM VICTORY PARK  
2575 PALOMA STREET, PASADENA



CO-SPONSORED BY:  
**THE CITY OF PASADENA**

## **CELEBRATING PASADENA'S 125TH ANNIVERSARY**

**FOOD • LIVE MUSIC • BOOTHS  
CHILDREN'S ACTIVITIES  
FREE ADMISSION • FREE PARKING**

**ARMENIAN COMMUNITY COALITION OF PASADENA  
P.O. BOX 70548 • PASADENA, CA 91117  
(626) 399-1799 • pcccoalition@gmail.com • www.acc-us.org**